ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սայաթ-Նովա համայնք, գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, Sayat-NovaV@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 17-Ն 02.12.2013թ.

2014Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց

Սայաթ – Նովա համայնքի վարչական տարածքում 2014թ. համար սահմանել տուրքեր և վճարներ հետևյալ դրուքաչափերով՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝ հիմնական օբյեկտների համար՝

ա) Մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական, բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցոց հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ

բ) Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բգ) 1001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ,

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համաւր՝ 1500 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինանական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվության չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

Չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառուցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ: 1,2,3 կետերի համար կիրառված է 0,5 գործակիցը:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ / ծխախոտի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

բ) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար

բ) Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վոելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա)առևտրի օբյեկտների համար 25000 դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50 000 դրամ

գ) բաղնիքների/սունաների/ համար 200 000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին զովազդ տեղադրելու ըստ յուրաքանչյուր տեղի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) դատարկ զովազդային վահանակների համար՝ 700 դրամ

բ) այլ արտաքին զովազդի համար 500 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

10. Համայնքի տարածքում հողամասերի չափագրման հողերի չափեիր ճշտման աշխատանքների կատարման համար տեղական տուրքի վճարը սահմանել 1000 դրամ:

11. Մրցույթի և աճուրդի մասնակցության վճար սահմանել 1000 դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝ կենցաղայնի աղբի համար ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 10/տասը/ դրամ:

Աղաբաբյան	Էմիլյա		
Այվազյան	Էմմա		
Ղարսոյան	Ազատ		
Պետրոսյան	Վազգեն		
Սաֆարյան	Անդրոնիկ		
Ղարիբյան	Էդգար		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հ. Հ. Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, Չարենցի 26
Հեռ.0236-6-06-90,
Sayat-NovaV@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 18-Ն 02.12.2013թ.

ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց

Համայնքի բյուջեի եկամուտները ավելացնել 300հազ. դրամով պետության կողմից տրվող "ընթացիկ սուբվենցիա համայնքներին" հաշվին և այն ուղղել օրենսդիր և գործադիր մարմին հատվածի 2412 հոդվածին 150 հազ. դրամ և փողոցների լուսավորություն հատվածի 4212 հոդվածին 150հազ. դրամով:

Աղաբաբյան	Էմիլյա		
Այվազյան	Էմմա		
Ղարսոյան	Ազատ		
Պետրոսյան	Վազգեն		
Սաֆարյան	Անդրոնիկ		
Ղարիբյան	Էդգար		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սայաթ-Նովա համայնք, գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, Sayat-NovaV@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 19-Ն 02.12.2013թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հեդվածի 1-ին կետի պանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց

Սայաթ-Նովա համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից 0.4815 հա կաղաստրային ծածկագիր (0025-0008-001, 0025-003, 004, 005, 006, 007, 010) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ բուժամբուլատորիայի շենքի և խանութի համար:

Աղաբաբյան	Էմիլյա		
Այվազյան	Էմմա		
Ղարսոյան	Ազատ		
Պետրոսյան	Վազգեն		
Սաֆարյան	Անդրոնիկ		
Ղարիբյան	Էդգար		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզի
գ.Սայաթ-Նովա Չարենցի 26

Հեռ. 0236-6-06-90
Sayat-NovaV@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ N20 -Ն **02.12.2013թ**

2014թ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով ավագանին `

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել 2014թ Սայաթ-Նովա համայնքի ղեկավարի աշխատավրձի չափը,գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հեղնյալ ձևով՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԻ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ հազ .դրամ
Համայնքի ղեկավար		185.0
հայեցողական պաշտոն		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	140.0
Համայնքային ծառայության պաշտոններ		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	140.0
Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	137.0
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	119.0
Գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /3.2-1/	1	115.0
Գյուղապետարանի աշխատակազմի 2-ին կարգի մասնագետ /3.3-1/	1	110.0
Քաղաքացիական աշխատանք		
Ակումբավար	1	60.0
Գրադանավար	1	60.0
Տեխ.սպասարկման անձնակազմ		
Օպերատոր	1	100.0
Հավաքարար	1	60.0
Վարորդ աղբահանության գծով	1	122.150
Պահակ	1	60.0

2. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 18.12.2012թ թիվ 21-Ն որոշումը

Աղաբաբյան Էմիլյա
Այվազյան Էմմա
Ղարսոյան Ազատ
Պետրոսյան Վազգեն
Սաֆարյան Անդրոնիկ
Ղարիբյան Էդգար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ